

«ՀԱՅԱԿ»

«Այսուհետեւ սրատագին ուրախութեամբ կ'ող ջունէ հրատարակումը Անթիլիասի կիլիկիան Հայրապետանոցի «Հասկ» ամսաթերթին, որ իր առաջին թիւին մէջ իսկ կը յայտնէ արդէն թէ ի՞նչ գեղեցիկ ապագայի է ուղղուած։

Առայժմ անիկա կը պարունակէ կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեսր կեղդոնին կրօնական, կրթական և փարչական գործառնութեանց մասին տեսութիւններ եւ լրտառուական տեղեկութիւններ, որոնք վասահ ենք թէ ուրախութեամբ պիտի կարգացուին ոչ միայն կիլիկիոյ վիճակայիններուն՝ այլ և ամրող Հայութեան կողմէ, քանի որ պատկերացումն են քայլ առ քայլ այն յառաջացումին և բարգաւաճումին, զոր յայտնապէս պիտի ունենայ Սիւրիոյ Հայութիւնը, չնորհիւ Աթոռակալ և Աթոռակից զոյզ կաթողիկոսներու արթուն հըսկողութեան և Շահէ Սրբազնի և այլոց նուրիսումի անկեղծ ոգիին։

Չունինք տարակոյս թէ «Հասկ» շուտով պիտի ատոքանայ, և կրօնաթերթի վիճակին վերածուելով որայ կապէ, լինելու համար կիլիկիոյ և ընդհանուր հայութեան համար հոգեսրապէս և կրթական ու մտաւորական տեսուկէտով շատ աւելի օգտակար պարբերաթերթ մը։

Ամէն անոնք որ զուրգուրանքով շըրջապատեցին Սուրբիոյ մէջ կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերահաստատման գաղափարը, Սուրբիոյ հայութեան մէջ կրօնական վերազարթումի համար թափած ջանքերը խսնդավառութեամբ ողջունեցին, մեզի հետ անգամ մը եւս պիտի հրճուին Կաթողիկոսարանի առած այս քայլին համար Հյոց Եկեղեցւոյ բերրի բայց անմշակ հողին վրայ բռւսած դեռ այժմ վրիտ «Հասկ»ը, լաւագոյն հունձքի մը հեռակարը կը պարզէ մեր առջեւ։

Այդպիսի իդձերով անոր Պատ. Արքաբարութեան կը ներկայացնենք մեր բարեկամթու զգացմանց հետ մեր խնդալից շնորհաւորութիւնները։

Հասկ՝ H A S K

Revue Mensuelle Arménienne

Catholicossat Arménien

ANTÉLIAS, Rep. Libanaise

Բաժնեկին տարեկան 10 Ֆրանկ ֆրան.
(ամեր. 75 սեն' արտասահմանի համար)։

Ս. ՅԱԿՈԲԻՆԵՐՍԵՆ

ԱՄԿԱՆ ՊԼՅ ՄԱՐՏԻԿԵՈՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ասկէց առաջ Ս. Պատրիարք Հայքը, Պատ. Տիեզրէն ժաղովոյ Համամտութեամբ, հրաւեր ուղղած էր Վահակ. Ասկան ՊԼՅ Մարտիկեանի այցելու Ս. Երուսաղէմ, և Ս. Աթոռոյոյ եղեմական կացութեան մասին քննական ուսումնասիրութիւն մը կատարելով տեղեկագիր մը կազմէ, որուեզզի ըստ այսմ տնօրինուեր պարտապատշաճ։

Համութեամբ կը հաղորդենք թէ Մարտիկեան Պէջ, որուն այս մասին ձեռնհասութիւնը անվիճելի է, ընդունած է այս հրաւերը, և գեղի գարուն պիտի ժամանէ Քաղաքու, ձեռնարկելու համար իր ստանձնած պարտականութեան։

Այս պաշտօնական տեղեկութեամբ կը յուսածք թէ Ծնդ միշտ կը մարտիկեան այն թիւրիմացութեաները, որոնք զանազան հայ թերթերու մէջ տեղ գտած էին այս մասին, և որոնք, սակայն, ամէնքն ալ հետեւանք էին այդ խնդրայն շուրջ ինքնարերաբար գոյացած խանդավառութեան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

◎ Վեհ. Քամիդ, որ Եպիսկոպոսական Եկեղեցւոյ կղերին կը պատկանի և Ս. Քաղաք ուխտաւոր եկած էր, յունուար 28-ին Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. իւ Կան. Հ. Գրիշմանի կողմէ ներկայացնեցաւ Սրբազն Պատրիարք Հօր։

◎ Երուսաղէմ հահանգի կառավարչի օգնական Մր. Խուլմանի իր պաշտօնով նապլուս փոխադրութեան առթիւ, փետր. 3-ին, հրաժեշտի, այցելութիւն տուաւ Ամեն. Սրբազն Պատրիարք Հօր, և ներկայացուց իր յաջորդը, Մր. Զօնի Պակեաւէն։

Նորին Ամենապատութիւնը սիրամիր ընդունելութիւնը մը բերեցն է ըրաւ հիւրերուն, չնորհաւորեց անոնց նոր պաշտօնները և մաղթանքները ըրաւ։

◎ Պատիստինի Թարձ Կոմիտէ Վահակ. Սրբ Արքուն Անոնայ, իր հետ ունենալով Երուսաղէմի Պ. Փախ-կառավարիչը, Հնագիտական Վարչութեան Ծնօրէնը, Աստիկանական հրամանատարը և իր Թիկնապահը առաջին անդամ ըլլալով վետր. 6-ին պաշտօնապէս այցելեց Ս. Յարութեան Տաճարը և պատեցաւ անոր զանազան մասերը։

Նորին Վահամութիւնը պատշաճօքէն ընդունեցաւ երեք իրաւակից ազգերու Ս. Յարու